ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2025թ. թիվ 200-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 341-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 21-ի թիվ 49/14/103534-25 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 14-ի «ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու, դրանց կանոնադրությունները և տարեկան աշխատանքային պլանի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 237-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 341-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 7)-րդ ենթակետում «Լոռու մարզային վարչության պետին» բառերը փոխարինել «համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Բազումի բաժնի պետին» բառերով,

2) թիվ 7 հավելվածի 1-ին և 7-րդ կետերում «Լոռու մարզային վարչության» բառերը փոխարինել «համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումների» բառերով:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. ապրիլի 22
ք.Վանաձոր